ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 408 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N 889-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 11-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 889-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 23-25-րդ կետերով.

«

23.	8701209015	«SCANIA» թամբային քարշակ	P410, R410 2014 թ.-2015 թ.	հատ	29	ԵՄ	651 630 000
24.	8716398007	«Krone» կամ «Schmitz» իզոթերմիկ կամ սառնարանային կիսակցորդներ	2015 թ.-2021 թ.	հատ	15	ԵՄ	337 050 000
25.	8716393001	«Krone» կամ «Schmitz» իզոթերմիկ կամ սառնարանային կիսակցորդներ	2015 թ.-2021 թ.	հատ	14	ԵՄ	314 580 000

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «281 464 726» թիվը փոխարինել «1 584 724 726» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ